ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՋՈՒԼԻԱՆ ԲԱՐՆՍԻ «ՎԵՐՋԻ ԿԱՆԽԱԶԳԱՑՈՒՄԸ» ՎԵՊՈՒՄ

ԱՐԵՎՀԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
հայցորդ
Երևանի Վ. Բրյուսովի անվան
պետական համալսարան
arev.khachatryan.89@mail.ru

ՀՏԴ՝ 821; 82–3; 82–31
DOI: 10.54503/1829–4278.2025.1–207

Ամփոփագիր

Հոդվածում ուսումնասիրվում է հիշողության հայեցակարգը Ջուլիան Բարնսի «Վերջի կանխազգացումը» վեպում, որտեղ քրոնոտոպը վեպի հիմնական գաղափարը միավորող ստեղծագործական գործիք է: Ժամանակի և տարածության յուրահատուկ խաչմերուկում ձևավորվում են քրոնոտոպային միավորներ, որոնք թույլ են տալիս ստեղծելու եզակի գեղարվեստական իրականություն: Քրոնոտոպը ներկայացվում է որպես «փոխակերպում», որը վերափոխում է երևակայականն ու իրականը: Հեղինակը խառնում է իրականությունն ու հիշողությունը, բարդացնում իրադարձությունների բովանդակությունը և ստեղծում մի նոր աշխարհ, որտեղ անցյալը և ներկան միավորվում են և ստեղծում բազմաշերտ իրականություն:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել, թե ինչպես է հեղինակը որպես գեղարվեստական իրականություն օգտագործում ժամանակն ու տարածությունը: Նշված նպատակին հասնելու համար կարևոր են հետևյալ խնդիրները.

- դիտարկել քրոնոտոպը որպես «փոխակերպման» գործիք, որի միջոցով իրականը վերափոխվում է երևակայականի,
- վերհանել քրոնոտոպային բարդ զուգորդումների կիրառումը որպես իրականություն, որտեղ հիշողությունը, անցյալը և ներկան միախառնվում են:

Բանալի բառեր. Բարնս, պոստմոդեռնիզմ, ժամանակ, տարածություն, քրոնոտոպ, երևակայական, իրական, հիշողություն, կրկնություն, փոխակերպում

Մուտք

«Վերջի կանխազգացումը»[1] (անգլ.՝ The Sense of an Ending[2]) վեպը Ջուլիան Բարնսի (Julian Barnes 1946) տասնմեկերորդ վեպն է: Այն լույս է տեսել 2011 թ. և արժանացել է Բուքերյան մրցանակի: Վեպում գերիշխող թեման ժամանակն է, որտեղ հետաքրքիր է հեղինակի այն նկատառումը, որ անձի երևակայությունը և հիշողությունը անցյալի վերաբերյալ ժամանակի ընթացքում փոփոխվում են, և անցյալը դառնում է անորոշ և անհասկանալի: Հիշողություններն անընդհատ տատանվում են և չեն հետևում գծային ժամանակացույցին. դրանք շարժվում են անցյալի երևակայական և ներկայի իրական պատկերների միջև: Հեղինակը փորձում է հնարավորինս պահպանել պատմության և պատումի ժամանակները՝ որպես իրականություն ներկայացնելով հորինված անցյալը: Ինչպես նկատել է ֆրանսիացի կինոտեսաբան Կրիստիան Մետզը, *«երկերում ժամանակն ունի երկակի դրսևորում՝ պատմության ժամանակ և պատումի ժամանակ: Եվ պատումի հիմնական գործառույթներից մեկն էլ մի ժամանակի փոխարկումն է մյուսին[3]: Պատմության ժամանակը կարող է լինել գծային, իսկ պատումի ժամանակը «շեղում» է գծային ժամանակը՝ դանդաղեցնելով, արագացնելով կամ կրկնելով հենց ժամանակը: Սա հնարավորություն է տալիս իրականությունը բազմաշերտ ներկայացնելու, որտեղ մի ժամանակը փոխարկում է մյուսին»[4]:* Այդպիսի երկակիությունը բնորոշ է նաև գեղարվեստական արձակին: Այդ երկակիությունը ցայտուն կերպով դրսևորվում է Ջուլիան Բարնսի «Վերջի կանխազգացումը» վեպում, որտեղ հեղինակը, փորձում է հնարավորինս պահպանել պատմության և պատումի ժամանակների նույնականացման պատրանքը: Հիշողությունները կարող են ստեղծվել և իրական չլինել: Հիշողությունը ենթակա է **մարդու անհատական մեկնաբանություններին և սուբյեկտիվ տպավորություններին**, որոնք հաճախ անորոշ են և վերածվում են պատումների կամ միտումների: Բայց, միևնույն ժամանակ, դրանք իրականության և պատմության արդյունք են: Գլխավոր հերոս Թոնիի միջոցով Ջուլիան Բարնսը բացահայտում է խոր արմատացած հոգեկան ապրումներ, որոնք ընկած են հիշողությունների հիմքում: Ջուլիան Բարնսի «Վերջի կանխազգացումը» ստեղծագործության մեջ տարածք կարող են լինել հերոսի հիշողությունները: Թոնին իր հիշողություններում ունի ժամանակային տարբեր շերտեր, որոնք դժվար տարանջատելի են: Ըստ Բախտինի՝ քրոնոտոպը չի կարող լինել մեկը. ավելի մեծ և կարևոր քրոնոտոպերը կարող են ներառել ավելի փոքր քրոնոտոպեր, «յուրա-

[1] **Barnes J.**, The Sense of an Ending, London: "Jonathan Cape", 2011.
[2] Մեջբերումների թարգմանությունը՝ հոդվածի հեղինակի:
[3] **Хализев В. Е.,** *Теория литературы*, Москва: «Высшая школа», 2005, с. 240.
[4] Նույն տեղում:

քանչյուր մոտիվ կարող է ունենալ իր քրոնոտոպը»[5]: Բարնսը սկսում է վեպը՝ խորհելով ժամանակի այս տեսակի ձկունության մասին: *«Մենք բոլորս գոյություն ունենք ժամանակի մեջ. այն և՛ ձևավորում, և՛ չափորոշում է մեզ ... : Խոսքն այն մասին չէ, որ, ըստ որոշ տեսությունների, ժամանակը ինչ-որ կերպ թեքվում և կամ զուգահեռ ընթացքով հոսում ինչ-որ այլ տեղ: Ո՛չ, ես նկատի ունեմ ամենասովորական, առօրյա ժամանակը, որը կանոնավոր կերպով առաջ է շարժվում ... : Բայց ամենափոքր ուրախ կամ տխուր լուրն այն է, որ ժամանակը ձկուն է: Այն դանդաղում է որոշ զգացմունքների ազդեցության տակ, արագանում է ուրիշների ձնշման տակ, երբեմն թվում է, թե ինչ-որ տեղ անհետանում է, ... և, երբեք չի վերադառնում» (էջ 16):*

Հերոսի հիշողությունները (Վերոնիկայի, տիկին Սառայի, Ադրիանի մասին) վեպում առանձին քրոնոտոպ են՝ մեծ քրոնոտոպը տրոհելով ավելի փոքրերի: Վեպում տարածությունը դառնում է ոչ միայն ֆոն, որտեղ զարգանում են իրադարձությունները, այլև հնարներ, որոնք մարմնավորում են հեղինակի պոստմոդեռնիստական գաղափարները: Նա հիշողությունների միջոցով ընթերցողին տալիս է հնարավորինս մոլորեցնող նկարագրություններ և, ինչպես յուրաքանչյուր պոստմոդեռնիստ գրող, գնահատականը թողնում ընթերցողին: Բարնսը պոստմոդեռնիստական հնարներով ընթերցողին ստիպում է խորանալ հիշողության և ժամանակի անհասկանալի առաջընթացի մեջ: *«Ժամանակը ընթացքում փոխել է իր էությունն ու նշանակությունը» (էջ 74):* Հեղինակը վեպի ժամանակային ընթացքը պատկերում է որպես խաչանկար. հիմնական սյուժեն կառուցված է տարբեր ժամանակների կցումով: Այս համատեքստում հատկապես կարևոր է ժամանակի փիլիսոփայական ընկալումը, որի ակունքներում է Լայբնիցը, ըստ որի՝ ժամանակը կապված է շարժման հետ, այսինքն՝ փոփոխության, ուստի՝ այն չի կարող լինել բացարձակ: Ժամանակը դատարկ է, բայց և գոյություն ունի միայն այն դեպքում, երբ կա շարժում, փոփոխություն և ընթացք[6]: Վեպում անցյալը և ներկան շարժվող գծերով զուգահեռվում, հատվում, միանում են: Ժամանակները խաչվում են և՛ հեղինակային պատումում, և՛ հիշողության, և՛ կերպարների ներսում:

Ստեղծագործության մեջ յուրօրինակ խորհրդանիշ դարձած արտահայտությունները ևս հատում են վեպի ժամանակի ընթացքը: Հեղինակը վեպի ժամանակային ընթացքը պատկերում է խաչանկարի ձևով՝ հիմնական սյուժեն կառուցելով տարբեր ժամանակների կցումով: Ան-

[5] **Бахтин М.,** Формы времени и хронотоп в романе. Очерки по исторической поэтике, *Вопросы литературы и эстетики***,** Москва: «Художественная литература», 1975, с. 235.

[6] Лейбниц и его трактовка времени //http://www.chronos.msu.ru/old/biographies/kazaryan_leibniz.html
(մուտք՝ 07.07.2024)

ցյալը և ներկան շարժվող գծերով զուգահեռվում, հատվում, միանում են: *«Դա այն պահերից էր, որն իմաստ է գտնում ավելի ուշ՝ փաստերից հետո, երբ անցյալի յուրաքանչյուր կտոր սահում է իր տեղը» (էջ 95):* Այստեղ Բարնսը ցույց է տալիս, թե ինչպես է անցյալը վերականգնվում հիշողության միջոցով, ինչպես մի գլուխկոտրուկ, որը երբեք չի տեղավորվում, և ինչպես է պատմությունը ենթակա վերաիմաստավորման: Կտորների «սահումը» ենթադրում է անցյալի իրադարձությունների շարունակական վերադասավորում, որոնք միշտ չէ, որ ճշգրիտ համընկնում են միմյանց: Օրինակ՝ վեպում պատահական չէ, որ անընդհատ հանդիպում ենք *The Rolling Stones*-ի երգը, որը ժամանակի ընթացքի վերաբերյալ է: «Time Is on My Side»-ը ծառայում է որպես հիշողության, կարոտի և ժամանակի ընթացքի թեմա: Երգը արտացոլում է Թոնի Վեբսթերի մտորումները, նրա անցյալը և պատրանքները, հաճախ հակադրվելով իրականությանը՝ ստիպելով առերեսվել իր հիշողությունների և գործողությունների հետևանքներին:

«Հետագայում ես ռադիոյով լսեցի Rolling Stones-ի «Time Is on My Side»-ը և մտածեցի. այո, հենց այդպես է: Ժամանակն իմ կողմից է, այն միշտ էլ եղել է իմ կողմից» (էջ 150):

Բարնսը այստեղ ընդգծում է այն գաղափարը, որ ժամանակը կարող է լինել և՛ ընկեր, և՛ հակառակորդ՝ հիշողությունները ներկայացնելով որպես փորձառություններ: Ողջ վեպի ընթացքում հերոսը շարունակ հիշում է իր ընկերուհու՝ Վերոնիկայի խոսքերը.

«Դու այդպես էլ այսքան ժամանակ ոչինչ չհասկացար, չէ՞» (էջ 110, 130, 150):

«Այո, ժամանակը իմ կողմից է» (էջ 91):

«Այժմ ժամանակը ինձ համար արագ է թռչում» (էջ 108):

Պատահական թվացող այս կրկնությունները կապում են հերոսի միտքը և հիշողությունը: Նույնը վերաբերում է նաև ժամանակային քրոնոտոպին. հիշողության մեջ ժամանակը կանգնած է և միևնույն ժամանակ գոյություն չունի: Հերոսը մտածում է ժամանակի և զգացմունքների մասին, որոնք անհասկանալի են եղել, իսկ հիշողությունը աղավաղված է: *«Ամբողջ կյանքս ժամանակի և հիշողության մեջ է, երբեմն դժվար է ապագայից նայել հետ, դեպի անցյալ և տեսնել, թե ինչ նոր զգացողություններ է բերել քեզ ժամանակը» (էջ 130):*

Ինչպես արդեն նշվեց, վեպի հիմնական քրոնոտոպը Թոնիի հիշողությունն է, որի շնորհիվ ընթերցողը ականատես է լինում սյուժեի զարգացմանը, իսկ ժամանակը հիշողության մեջ ամրանում է և դառնում գեղարվեստորեն տեսանելի:

Նախկին ընկերուհի Վերոնիկայի մոր մահից հետո Թոնին մի նամակ է ստանում, որը ստիպում է նրան վերհիշել անցյալում կատարած սխալները, վերագնահատել հիշողության իր տեսակետը, վերանայել

և վերաշարադրել պատանեկան տարիների իրական պատմությունը: Այստեղ Թոնի Վեբսթերը բախվում է այնպիսի խնդիրների, ինչպիսիք են հիշողության անկատարությունը, անցյալի և ներկայի բարդ հարաբերությունները, որոնք փոփոխում են ժամանակային և թեմատիկ կառուցվածքը: *«Բայց նրա մահը ավելի շատ շոուի համար էր, քան «ողբերգական» ... Ադրիանն արագ անհետացավ անցյալում՝ զբաղեցնելով ժամանակի և պատմության իր տեղը» (էջ 106):*

Ուսումնասիրելով պատմության ժամանակի և պատումի կապը՝ Բարնսի «Վերջի կանխազգացումը» վեպում կարելի է դիտարկել հեղինակի կողմից դիտավորյալ ժամանակային հաջորդականության տարաբնույթ խախտումները: Ֆրանսիացի տեսաբան Ժ. Ժանետը այդ տիպի խախտումները անվանել է պատումային անալեպսիս (հետընդգրկում կամ հետհիշատակում), որը ենթադրում է ավելի վաղ կատարված իրադարձությունների ներմուծում: Անալեպսիսն իր հերթին կարող է լինել փակ (պատումի մեջ ամփոփ կերպով ընդգրկվում է ավելի վաղ կատարված որևէ իրադարձություն) և բաց, երբ այն ընդգրկում է գրեթե ողջ տեքստը, և հետընթացը տեղի է ունենում պարբերաբար[7]: Փակ անալեպսիսի օրինակ են այն բոլոր դեպքերը, երբ պատմողը, մի պահ թողնելով բուն իրողությունները, ներկայացնում է իր հերոսի կյանքի ավելի վաղ տարիները՝ մանկությունը, պատանեկությունը կամ որևէ ամբողջական շրջան: Բարնսը վեպում օգտագործում է անալեպսիսը՝ որպես մի տեխնիկա, որը թույլ է տալիս հերոսին վերապրելու անցյալը, որպեսզի ընթերցողին ներկայացնի իր ապրումները: *«Դպրոցական տարիներս առանձնապես չեն հետաքրքրում ինձ, ես նոստալգիա չունեմ: Այնուամենայնիվ, ամեն ինչ սկսվեց դպրոցից ...» (էջ 16): «Մի առավոտ, տնօրենը մահացու ձայնով հայտարարեց, որ ... Ռոբսոն անունով մի երիտասարդ մաթեմատիկոսը է մահացել՝ ինքնասպան եղել» (էջ 33):* Այսպես, Ջ. Բարնսի «Վերջի կանխազգացումը» վեպում, ընդհատելով բուն դեպքերը, սկսում է բավական մանրամասն պատմել գլխավոր հերոսի՝ պատանեկության տարիները, նրա ապրած կյանքը մինչ համալսարան, կամ սիրավեպը Վերոնիկայի հետ: Երբեմն անալեպսիսը պատումի հիմնական մասն է, բայց հեղինակը անհրաժեշտ է համարում տարիներ առաջվա դեպքերը շարադրել՝ խախտելով ժամանակային բնական հերթականությունը, կամ երբեմն նորից հետ է գնում ու հիշատակում անցյալի որոշ դրվագներ[8]:

«Եվս մեկ բան, որ հիշում եմ, երեքս էլ, ի նշան մեր միասնության, ժամացույցը կապում էինք դաստակի ներսից: ... Այսպես մենք ժամանակը դարձնում էինք անձնական և նույնիսկ գաղտնի սեփականություն: Մենք

[7] **Женетт Ж.,** *Работы по поэтике. Фигуры*, в 2-х т., т. 1, Москва: Изд. им. Сабашниковых, 1998, с. 71-116.

[8] Նույն տեղում, էջ 82:

կարծում էինք, որ Աղրիանը կնկատի այս հնարքը և կհետևի մեր օրինակին, բայց ոչինչ չստացվեց» (էջ 20): Հիշողության մեջ կուտակված մտապատկերներից նոր երևակայական մտապատկերներ և զուգորդություններ ստեղծելով՝ Թոնին նշանակալից խնդիրների լուծումներ որոնելու առջև է կանգնում: Վեպում տարբեր ժամանակային բովանդակության և կառույցի տեքստեր ներդնելով՝ Բարնսը պատկերում է հիշողությունը որպես անցյալի բարձրագույն ձև. «*Աղրիանը նամակում թույլտվություն էր խնդրում Վերոնիկայի հետ հանդիպելու համար: Այո՛, այո՛, բայց ինչո՞ւ նրա հետ, ինչո՞ւ հենց այդ պահին, իսկ ընդհանրապես ինչի՞ պետք է թույլտվություն խնդրել: Իրականում, եթե ես հնարավորինս հավատարիմ մնամ իմ հիշողությանը, ապա նա բառացիորեն գրել էր հետևյալը. նա և Վերոնիկան արդեն հանդիպում են, և վաղ թե ուշ լուրը կհասնի ինձ, և, հետևաբար, ավելի լավ է՝ ես դա իմանամ իրենից: ... Եվ, վերջապես, Վերոնիկան նույնպես համաձայնեց, որ նման նամակ գրելը պարզապես անհրաժեշտություն է, ավելին՝ դա մասամբ նրա գաղափարն էր» (էջ 83):*

Հերոսի մտածողությունը, պատկերացումները և հույզերը հասկանալու համար այս տեքստերը քրոնոտոպային մի յուրօրինակ ուղեցույց են: Անցյալի անորոշ հիշողությունների միջոցով Բարնսն իր ընթերցողներին ստիպում է չհավատալ հիշողություններին, քանի որ հիշողություններն անընդհատ փոխվում են և չեն հետևում գծային ժամանակացույցի: Դրանք շարժվում են անցյալի երևակայական և ներկայի իրական պատկերների միջև՝ խախտելով քրոնոտոպը: Վեպում պոստմոդեռնիստական մասնատման հնարքը ծառայում է որպես հիշողության իրական կամ երևակայական ներկայացում: Հեղինակը ընթերցողին ստիպում է անցնել հերոսի երևակայական հիշողությունների միջով և շեղում իրական գրական գործընթացից, որը կարճ ժամանակում առաջացնում է մի շարք կեղծիքներ և փոխարինումներ: Բարնսը ստեղծում է «երևակայության պատկեր», որը նպաստում է երկի ժամանակային ողջ շերտերի նորացմանը: *«Կարծում էի, որ լավ հիշողություն ունեմ: Բայց պարզվում է՝ ո՛չ: Ես հիշում եմ այն, ինչ ուզում եմ հիշել, բայց ոչ այն, ինչ պետք է»: «Ես ստիպված էի ինքս ինձ հիշեցնել, որ հիշողություններն անվստահելի են: Հիշողությունների դժվարությունն այն է, որ չես կարող ընտրել: Դրանք նման են ոլորահատ սղոցների կտորների, որոնք երբեմն չեն համընկնում միմյանց» (էջ 221–222):*

Ֆրանսիացի գրականագետ Ժիլ Դելյոզը ժամանակակից քրոնոտոպը սահմանում է որպես «*աբստրակցիա, երկատվածություն, երկակիություն և կրկնություն: Դելյոզը դիտարկում է ժամանակը որպես խորհրդանիշների համակարգ, որտեղ հերոսի հիշողությունը դառնում է ստեղծագործության գլխավոր գաղափարը*»[9]: Վեպի գլխավոր քրոնո-

[9] **Deleuze G.,** The logic of sense, London: Columbia University Press, 1990, p. 57–62.

տոպը՝ հիշողությունը, «փոխակերպում» է հերոսին, քանի որ նա չի հիշում, թե կյանքի ինչ-որ փուլում ինչպես է ընդունել ընկերոջ՝ Ադրիանի գրած նամակը: Նա իմաստը սինթեզել է երևակայականի միջոցով:

Թոնիի հիշողությունների այս սխալ բնույթը երևում է, երբ Վերոնիկան Թոնիին տալիս է նամակ, որը նա գրել է Ադրիանին իր երիտասարդության տարիներին. «*Ես մի քանի անգամ վերընթերցեցի այս նամակը*»: Հետագայում նա հասկանում է, թե որքան տհաճ նամակ էր գրել՝ լի հայհոյանքներով. «*Սիրելի՛ Ադրիան, ավելի ճիշտ՝ սիրելի՛ Ադրիան և (կականք) Վերոնիկա, հուսով եմ՝ դուք կզղջաք, որ ես ձեզ ծանոթացրել եմ*» (*էջ 95*): Երբ նա վերընթերցում է այս տողերը, նա հուսահատորեն զղջում է իր արածի համար, ինչպես պարզ է նրա խոսքում. «*Պատկերացրեք խայթոցի ուժը, երբ ես վերընթերցեցի իմ խոսքերը. նրանք կարծես ինչ-որ հնագույն անեծք լինեին, որոնց մասին ես նույնիսկ մոռացել էի*» (*էջ 138*): Այս նամակը տրոհված մյուս քրոնոտոպն է և վեպի կարևոր խորհրդանիշներից մեկը՝ հողում կատարելով նրա կորցրած հիշողություններին: Ընթերցողը երբեք չի կարող որևէ բան կարդալ կամ հասկանալ մինչև այն չբացահայտի Վերոնիկան: Գլխավոր հերոսի համար ժամանակի ընկալումը հիմնականում անձնական է, և որևէ կապ չունի սովորական ֆիզիկական ժամանակ ասվածի հետ: Այս գաղափարը կարելի է համեմատել Հենրի Բերգսոնի «Ժամանակ և ազատ կամք» աշխատության հետ:

«*Հիշողություններն ունեն իրենց ժամանակային շրջանակը՝ լիովին անկախ ֆիզիկական ժամանակից: Ժամանակը մարդու մտքում ճկուն է: Եթե ժամանակի ճանապարհորդությունը հնարավոր է, ապա հիշողությունները միակ ժամանակի մեքենաներն են, որոնք հասանելի են մարդկային ցեղին*»[10]:

Անցյալը երկիմաստ է՝ մե՛րթ իրական, մե՛րթ երևակայական: Թոնին փորձում է իրականությունից փախչելով երևակայել և ժամանակը վերադարձնել, վերաշարադրել և ուղղել իր սխալները: Հիշողությունը վճռորոշ դեր է խաղում Թոնիի համար, իր անձնական պատմությունը ներկայացնելով այնպես, ինչպես ինքն է ցանկանում: Բարնսը, ավելացնելով որոշ երևակայական իրադարձություններ, պատմվածքը դարձնում է երկիմաստ և անվստահելի: Նա ընթերցողին հնարավորություն է տալիս գուշակելու հիշողության մեջ պատմությունների իրական լինելը, ապա կասկածի տակ է դնում հիշողությունը և հասկացնում, որ իրականությունը այդքան էլ իրական չէ, իսկ ճշմարտությունն էլ մեկը չէ: Իրականությունը լի է անհասկանալի հիշողության կտորներով և պատմության սուբյեկտիվ մեկնաբանություններով: Սա հստակորեն

[10] **Bergson H.,** *Time and Free Will. An Essay on the Immediate Data of Consciousness*, London: George Allen & Unwin LTD, 2018, p. 98–134 (E-Book #56852, accessed 06.04.2024).

շեշտում է Բարնսը, երբ Թոնին մտածում է կյանքի և հիշողության մասին՝ ընդդեմ իրականության:

«*Որքա՞ն հաճախ ենք մենք պատմում մեր կյանքի պատմությունը, որքա՞ն հաճախ ենք մենք հարմարեցնում, զարդարում, խորամանկ քայլեր անում: ... մեր շրջապատում կլինեն մարդիկ, որոնք ... կհիշեցնեն մեզ, որ մեր կյանքը մեր կյանքը չէ, այլ պարզապես պատմություն է, որը մենք ունենք: Պատմություն մեր կյանքի մասին*» (*էջ 95*): Իր հարցազրույցներից մեկում Ջեֆրի Բրաունի հետ այն հարցին, թե արդյո՞ք պատմողը ուզում է հասկացնել ընթերցողին, որ հիշողությունը ոչ այլ ինչ է, քան պատմության սեփական մեկնաբանություն, Բարնսը նշում է. «*Գիտե՞ք, մենք սկսում ենք պատմել մեր պատմությունները, իսկ հետո, երբ մեծանում ենք, մեր կյանքի վկաները պակասում են, և այդպիսով, ավելի քիչ մարդիկ կան, ովքեր իրականում կարող են ստուգել կամ վիճել իրադարձությունների մեր վարկածի հետ: Այսպիսով, եթե ինչ-որ բան առաջանա, որը ձեր քիթը կանգնեցնում է կեղծիքի պատին, դա գրքի էներգիան և գործողությունն են առաջացնում: ... Հետաքրքիրն այն է, թե ինչպես ենք մենք ընկալում աշխարհը, և ինչպիսին է աշխարհը իրականում: Տարբերությունները պատմությունների միջև է, նրանք, որոնք մենք պատմում ենք ուրիշներին, և այն պատմությունները, որոնք մենք ինքներս ենք հիշում*»[11]:

Ջուլիան Բարնսի «Վերջի կանախազգացումը» վեպը խճճված կերպով միաձուլում է ժամանակի, ճշմարտության, պատմության և հիշողության թեմաները՝ կոչ անելով ընթերցողներին խորհել անձնական բնույթի և հիշողության հավաստիության մասին: Իրականության և երևակայության միախառնումը թույլ է տալիս հեղինակին խորամուխ լինել Թոնիի ափսոսանքների և բաց թողնված հնարավորությունների մեջ: Երբ Թոնին վերանայում է իր անցյալը, նա պատկերացնում է տարբեր արդյունքներ և հնարավորություններ՝ ընդգծելով մարդկային հույզերի բարդությունը և ընտրությունների ազդեցությունը ժամանակի ընթացքում: Վեպի կառուցվածքն ինքնին խառնում է ժամանակի, իրականի և երևակայականի սահմանը: Բարնսն օգտագործում է այս խառնուրդը շերտավոր պատմվածք ստեղծելու համար: Ամբողջ վեպի ընթացքում Թոնին մտածում է, թե ինչպես է ժամանակը փոխում իր հիշողությունները: «*... Մեր հիշողության մեջ մտքերը հենց այնպես գոյություն չունեն, նրանք ժամաանկի մեջ են: Մենք առաջ ենք մղվում՝ նկարագրելով նույն իրադարձությունները, վերադառնում նույն մտքերին և զգացմունքներին: ... Ավելի ուշ ես սկսեցի հիշել այնպիսի բաներ, որոնք վաղուց արդեն մոռացել էի*» (*էջ 220-221*):

[11] *Interview with Barnes* https://www.pbs.org/newshour/arts/conversation-julian-barnes-winner-of-the-2011-man-booker-prize *(accessed 06.27.2024)*

Թոնիի մտորումները ցույց են տալիս, թե ինչպես հիշողությունը կարող է լինել և՛ մխիթարության, և՛ անհանգստության պատճառ: Նա հաճախ է բախվում այն փաստին, որ իր հիշողությունները չեն համընկնում ուրիշների հիշողություններին: Այս անհամապատասխանությունն ընդգծում է վեպի հիմնական փաստարկը. մեր անձնական պատմությունները կառուցված են պատմություններից, որոնք կարող են կտրուկ տարբերվել մեկը մյուսից: *Երիտասարդները հորինում են պատմություններ ապագայի մասին, իսկ տարեցները անցյալը հորինում են ուրիշների համար (էջ 151):* Իզուր չէ, որ վեպը սկսում է պատմել թոշակառու տարեց մարդը, որի հիշողություները տարիների ընթացքում խամրել են: Այսպես՝ հասկանալի է դառնում, որ Բարնսը ընդգծում է հիշողության սահմանափակումները՝ ներկայացնելով ժամանակային խառը հիշողության շերտեր, որտեղ իրականն ու երևակայականը դժվար է տարանջատել:

Եզրակացություն

Վերլուծելով «Վերջի կանխազգացումը» ստեղծագործության ժամանակատարածային տարրերը՝ կարող ենք եզրահանգել.

1. Ժամանակը և տարածությունը երկում ունեն իրենց յուրահատուկ տեղը, որտեղ մեծ ու փոքր քրոնոտոպային բազմաթիվ միավորները ձևավորում են գեղարվեստական իրականությունը՝ պայմանավորելով ստեղծագործության իմաստը և գաղափարը:
2. Քրոնոտոպը «փոխակերպում» է երևակայականը՝ իրականի, իսկ իրականը՝ որպես երևակայականի:
3. Քրոնոտոպային բարդ զուգորդումներով հեղինակը խառնում է իրադարձությունների բովանդակությունը՝ հիշողության ողջ մակարդակը ներկայացնելով իբրև իրականություն:

THE CONCEPT OF MEMORY IN JULIAN BARNES' NOVEL *THE SENSE OF AN ENDING*

AREVHAT KHACHATRYAN
An Applicant
Yerevan Brusov State University

Abstract

The article examines the concept of memory in Julian Barnes' novel *The Sense of an Ending*, where the chronotope is a creative tool unifying the main idea of the novel. Chronotopic units are formed at the unique intersection of time and space, creating inimitable artistic reality. The chronotope is presented as a "transformation" modifying the imaginary and the real. The author mixes reality and memory, complicates the content of events, and creates a new world where the past and present merge, forming a multi-layered reality. This convergence challenges the reliability of personal memory and redefines narrative truth, illustrating how subjective recollection shapes identity and perception. The chronotope thus serves not merely as a structural device but as a lens through which the narrative interrogates the nature of memory, guilt, and the passage of time.

Keywords: Barnes, postmodernism, time, space, chronotope, imaginary, real, memory, repetition, transformation

КОНЦЕПЦИЯ ПАМЯТИ В РОМАНЕ ДЖУЛИАНА БАРНСА «ПРЕДЧУВСТВИЕ КОНЦА»

АРЕВАТ ХАЧАТРЯН
соискатель
Ереванский государственный
университет имени В. Я. Брюсова

Аннотация

В статье рассматривается концепция памяти в романе Джулиана Барнса «Предчувствие конца», где хронотоп является творческим инструментом и объединяет основную идею романа. Хронотопические единицы формируются на уникальном пересечении времени и пространства, создавая неповторимую художественную реальность. Хронотоп представлен как «трансформация», изменяющая воображаемое и реальное. Автор смешивает реальность и память, усложняет содержание событий и создает новый мир, в котором прошлое и настоящее сливаются, создавая многослойную реальность. Это сближение ставит под вопрос достоверность индивидуальной памяти и переосмысливает повествовательную истину, демонстрируя то, как личные воспоминания формируют идентичность. Здесь хронотоп не только структурный прием, но и средство, позволяющее раскрыть темы памяти, вины и времени в повествовании.

Ключевые слова: Барнс, постмодернизм, время, пространство, хронотоп, воображаемое, реальное, память, повторение, трансформация

Գրականության ցանկ

1. **Barnes J.**, *The Sense of an Ending*, U.K: Jonathan Cape, 2011.
2. **Bergson H.,** *Time and Free Will. An Essay on the Immediate Data of Consciousness,* London: George Allen & Unwin LTD, 2018, p. 98–134 (E-Book #56852, accessed 06.04.2024).
3. **Deleuze G.,** *The logic of sense*, London: Columbia University Press, 1990.
4. Interview with Barnes https://www.pbs.org/newshour/arts/conversation-julian-barnes-winner-of-the-2011-man-booker-prize *(accessed 06.27.2024)*
5. **Бахтин М.,** Формы времени и хронотоп в романе. Очерки по исторической поэтике, *Вопросы литературы и эстетики,* Москва: «Художественная литература», 1975.
6. *Лейбниц и его трактовка времени http://www.chronos.msu.ru/old/biographies/kazaryan_leibniz.html (accessed 07.07.2024)*
7. **Хализев В. Е.,** *Теория литературы*, Москва: «Высшая школа», 2005.
8. **Женетт Ж.,** *Работы по поэтике. Фигуры*, в 2-х т., т. 1, Москва: Изд. им. Сабашниковых, 1998.

Ընդունվել է՝ 25.04.2025
Գրախոսվել է՝ 02.05.2025
Հանձնվել է տպ.՝ 11.09.2025